

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Պուլիարիոյ համար

8 արեկան ֆր. 10


վեցամսեայ * 5

Արտասահման

8 արեկան ֆր. 12

վեցամսեայ * 6

ԿԱՆԻՒԿ



Իրաւօրէնք եւ չեն
տրուիր

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայեղի»-ին մէջ աղոր աւելնալ,

Պատրիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսները Բոլշևիկի հայ ուսանողները իրենց ծախքով այդ վարժարանին մէջ որք տղայ մը պահելու ազնիւ մտածու-մը ունեցած են . Անցեալ երկուշաբթի օրը ուսանողներուն կողմէ մէկը կը ներկայանայ նպաստից Յանձնաժողովին և Տ. Վահրամ Մանկունի Սրբազանին յանձնարարականովը Ազգ. Հիւանդանոց երթալով կը նորէ Բալուցի պատանի մը, Դասպար Հէնէցեան որ Ռուսները Բոլշևիկի ընդունուի :

— Կովկասի սուրհանդակը դարձեալ կտակի մը լուրը կը բերէ : Օգոստ. 29ին Խոջիվանքի գերեզմանատան մէջ հողին յանձներ են մարմինը Միքայէլ Փրի-դոնեանի , որ 10,000 ռուպլի կտակած է եկեղեցիներու մէջ երգեցիկ խումբերու կանոնաւոր կազմակերպութեանը համար :

— Գերմանիոյ կայսրը «Կարմիր Ար-ծիւ» պատուանշանին Բ. Աստիճանը նը-ւիրեր է Պարսկաստանի արտաքին գոր-ծոց նախարարութեան առաջին թարգ-ման Յովհաննէս խան Մասէհեանի :

— Թիֆլիզէն կը հաղորդեն թէ, «եղ-

բարք Ծովեանեան» ընկերութիւնը 25 տարուան մենաշնորհ ստացեր է Ռուս կառավարութենէն , Սեւանայ լճին վրայ շոգենաւ բանեցնելու :

— Այս տարի Ս Խաչի առթիւ Արմաշ ուխտագնացութիւնը ըրած են 8000 հո-գի : Կառավարութիւնը վտնքին յետ-նեալ տուրքերը (30,000 զրշ.) շնորհած է :

— Ռուսմանկան խորհուրդը շրջաբե-րական մը ղրկելով մայրաքաղաքի Թաղ. Խորհուրդներուն, կը հրաւիրէ զանոնք իրենց վարժարանաց ուսուցիչ և ուսուց-չուհիներուն կոչումը ընել մէյմէկ գու-մար ստորագրելու , անով մասնակցելու համար յիշատակելի նուէրի մը պատ-րաստութեանը, որ պիտի ընծայուի մեծ-անուն Յոբելեար Տ. Մատթէոս Մամուր-եանի :

— Դաւրէթի «Հայուհեաց Բարեգոր-ծական» ընկերութիւնը իր ներկայ տա-րեջջմանին մէջ 500ի չափ դաղթական Հայերու պէտքերն հոգացեր , զանոնք գործի դրեր կամ ճամբու ծախք վը-ճարելով ուղած տեղերնին ղրկեր է : Քա-ղաքին վարժարանաց նպաստելէ զատ՝ բանի մը գիւղերու մէջ ալ նախակրթա-րաններ բացեր է և Դաւրէթի մէջ ունի եղեր իր Մանկապարտէզն ու կարուճի և

գորգագործութեան արհեստանոցներ հայ աղջիկներուն ու կիներու արհեստ սովորեցնելու համար: Ընկերութիւնը իր այս գործողութիւնները ի գլուխ հանելու համար յաջողեր է այս տարի հաւաքել 49,622 ֆրանք:

— Փրանսերէն Սերվէթի մէջ հետեւեալ զարմանալի լուրը կը կարդանք.

«Բեթերսպուրկի լրագիր մը կըսէ թէ Ռուս կառավարութիւնը որոշեր է դադարեցնել այն ամեն հրէական թերթերը որոնք կատաղի պալլաքար մը մղած են Հայերուն դէմ»:

— Ս. Խաչի օրը Դուրեան Սրբազան Արմաշի Դպրեմանքին մէջ իր անդիանիկ ձեռնադրութիւնը կատարեր է, վանքին սաներէն երկուքին վրայ սարկաւազութեան աստիճան տալով անոնց մին Սկիւտարցի, Գառնիկ անուն, իսկ երկրորդը Խաչիկ՝ Տրապիզոնցի:

— Եէնիճէ Գալէի վեց գիւղերու աղագայինք ասկէ առաջ լատին եկեղեցականներէ նպաստ ընդունելով դաւանափոխ եղած էին. այս անգամ ծանուցուած է Պատրիարքարան թէ 18 ընտանիք դարձած են մայրենի եկեղեցւոյ գիրկը:

ՀՐԱԺԱՐԵԱԼ (???) ՊԱՏՐԻԱՐԷԻ

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

— «Պատրիարքը մերժեց Մայր եկեղեցւոյ Թագ. Խորհուրդի առննապետ Սեպուհէֆ. Բլատեանի հրաժարականը, յանձնարարելով որ շարունակէ իր պաշտօնը:

— Պատրիարքը Բագ. Ժողովին նկատմամբ յանձնեց Տրապիզոնի առաջնորդ տեղապահի կողմէ զրկուած մէկ տեղեկագիրը:

— Շարաթ կէս օրէն հաջորդ Պատրիարքարանի երկու դիւանադպիրները Բարթողթէլեան և Կարապետ Խաչատուրեան Պատրիարքին բնակարանը երթալով հրահանգներ ստացան:

(Հրաժարեալ Պատրիարք մը միմէ ա-

սանկ տնօրէնութիւններ կրնա՞ն ընել . . .

«Օխ, Պատրիարքին հրաժարականը կասարուած իրողութիւն մըն է» պոստոյ Շարժումի Պոլսոյ իրաւեկ (???) Թըղթակցին ակաւջը խօսի:

— Թիֆլիզէն կը գրեն թէ Անգլեոսական հանքարդիւնարեական նորակալ մը կերութիւն մը թոյլտուութիւն ստացեր է Ռուսիայի մէջ գործելու: Յիշեալ ընկերութիւնը նպատակ ունի շահագործել վաճառական Մելիք-Ալաբեանի և Եղբ. Մուրաֆեաներու ձեռք բերած պղնձի ձուլարանները եւ պղնձահանքերը Զանգեզուրի գաւառներու մէջ:

— Այս տարի Խարքովի համալսարանը մտնելու համար ներկայացող ընտրելիներուն մէջ (ընդ ամենը 213 ուսանող) 13ը հայ են եղեր:

— Իգմիրի երկրաշարժի մասին նոր մանրամասնութիւններ կը հասնին: Նազիլլի մէջ շէնքերու վնասը բաւական կարեւոր է: Շատ տեղեր ջուրերը քաշուեր են: Քիրազլլի մէջ հողը շատ տեղեր ճեղքուած է և փոսերէն ջուր կը բլլի: Ուղտապան մը իր կարաւանովը մեծ դժուարութեամբ կրցեր է դէմը ելած յանկարծական լիճերէն ու խրամատներէն անցնիլ:

Արկածելոց օգնելու համար նպատամատոյց յանձնաժողով մը կազմուեր է, որ նպատակ ունի հրապարակ պիտի հանէ:

Սոյն երկրաշարժը 2 միլիոն ոսկիի վնաս հասուցած է:

— Կիրակի առտու Իգմիրի մէջ ալ հարաւէն հիւսիս երկրաշարժի ցնցում մը զգացուեր է, առանց վտանգաւոր հետեւանք մը ունենալու:

ՏԵՂԱԿԱՆ

Վաղը՝ ըստ Սահմանադրութեան՝ տեղ-
ւոյս եկեղեցիին մէջ Թաղ. Խորհրդոյ ընտրու-
թիւն պիտի կատարուի։ Այլ յուսանք որ ե-
կեղեցիին ու զպրօքը սիրով ժողովուրդը իր
ընտրողի իրաւունքը զօրծաղրելու մէջ չի
թերանար։

Վառնաի քահանաներէն Տ. Սարգիս քա-
հանայ Ղարապետ՝ Աւագերէց Տ. Մարտիրոս
հօր հրամանաւր 10—12 օրուան համար
Ընմուտ գացած է, Ս. Խաչի առթիւ տեղ-
ւոյն Թաղ. Խորհրդոյ հրաւիրմամբ, որովհե-
տե Ընմուտի Տ. Խորեն քահանան հիւանդ
ըլլալով, այս միջոցի անկողնոյ կը ծառայէ։

Ի նպաստ Հայաստանի սովերոյ Բ. ան-
գամ Վասնայի մէջ տրուած թատերական
ներկայացման ներկայ գտնուելով, ցարկ տոմ-
սակին փոխարժէքը չի վճարող մէկ քանի պա-
րօններուն (վաճառական, խանութպան, ու-
սուցիչ, տնօրէն) վերջին անգամ կողգարար-
ուի պարտքերն ին տալ, որպէս զի այլ եւս հա-
շիւները փակուին. հակառակ պարագային
յականէ անուանէ պիտի հրատարակուին։

ՆԱԾԱԿ. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բարիչ. 19 Սեպտ. 99

«Բիւզանդիոնի 862 թուոյն մէջ Բա-
րիզցի բարապետութեամբ լիթակցութիւն
մը կար, ի մասին Պ. Ա. Էգնանանի 6 հատ
որը ուղեւուն, իր ադամանգ տաշելու գոր-
ծարանին մէջ արհեստ սորվեցնելու համար։

Պ. Թլթակցին լիցնամական ոգին յայտ-
նի կերեւոյ իր տուած տեղեկութիւններով ու-
րոնց ամենքն ալ հեռի են ճշմարտութենէ։
Նա կըսէ թէ Նուպար բաշայի քենպեյխա-
նէն առած է գործաւորներ, որոնց 2-3 ֆր-
օրական կուտայ, մինչդեռ գաղիագոց 8-10
ֆր. կուտայ։ Ասիկա սուտ է։ Նախ՝ հայ գոր-
ծաւոր չկայ. որ իր քովը առնէ երկրորդ Նու-
պար բաշայի ապաստանարանէն արհեստ սոր-
վելու համար իրեն զիմով գործաւոր չկայ, ե-
րանի թէ ըլլար եւ գաղիացեաց հաւասար օ-

րական առնէին։ Երրորդ կըսէ թէ ադամանգ
տաշելը շատ դիւրին գործ է, մարդ 2-3 օ-
րէն կրնայ սովորել, (էբր թէ փայտ տաշել ըլ-
լար) եւ պոյ իհնէն ինքը շարաթ մը միջոց
կը դնէ։ Ահա իր տուած տեղեկութիւնները
ասանկ անհեթեթ բաներ են. ադամանգ տա-
տաշելու արհեստը սովորելու համար առ նը-
ւագն մէկ տարի պէտք է, այն ալ սորվողին
ընդունակութենէն կախում ունի, որով ը-
սել չըլլայ թէ Պ. Էգնանան այն 6 որսերուն
արհեստը սովորեցնելու համար գոնէ տարի մը
ամսական հարիւր ֆր. պիտի ծախսէր ամէն
մէկին, Բարիզի պէս տեղ մը ապրեցնելու հա-
մար, որ տարեկան 360 օսկրի գումարի մը
կը հասնի, ինչ որ չախախիչ փաստ մ'է Պ.
քաւիլցիին գծուած ամբաստանութեան։

Պ. Էգնանան իւր հարստութիւնը շինած
է ոչ թէ դիմացինին տկարութենէն օգտուե-
լով, այլ իւր վաճառականական հմտութեամբ
եւ յամառ աշխատասիրութեամբ, որոնցմով
կարող եղած է բարձր դիրք մը գրուել,
պատիւ եւ համբաւ շահիլ Բարիզի հրապա-
րակին վրայ հակառակ իր նախանձոտ թըշ-
նամեաց ատելութեան։

Ա'երեւի թէ այդ յողուածագիր Պ. քա-
րիզցին մին է այն մերժուողներէն, որոնք
գործի կամ գրածի համար այս կամ այն
հարուստին կը դիմեն ու համը փախցունե-
լով վերջի վերջոյ առիթ մը կը փնտռեն
այսպէս աղտոտ սուտերով անոնցմէ վրէժ (?)
լուծելու համար։ Ամօթ իրենց։

ԱՐԵՏ


Ռուսահայերէնի նոր նմոշ մըն աշ

(«Մշակոյն» քաղաւած)

... պատրաստում է գիմնադրաների,
կօպուսի, զէմլէմէրների, բէալական ու-
սումնարանների։

Էլէկտրատէխնիական տիւրբու-
նէր, պօրտիսգարներ, վէնտիլատայիա,
կանալիւպայիա, շուշան, եաշաման, բէ-
զէթա, վիօլէթ, պաշուլի, դէլիօտրուպ-
Բոժ. — Հոգիք սիրեմ, ընթերցող,
եթէ այս չորեքլեզուան խառնակութե-
նէն բան մը հասկցաք, խնդրեմ, ինձի
ալ հասկցուր։

ԱՆԳԼՈՅ ԹԱԳՈՒՅԻՆ




Ունեւորի գղեակը, որ Անգլիոյ թագուհին ունեւորական բնակավայրն է, երեք տեսակ յարկեր կը պարունակէ: Այցելունները կրնան անոնցմէ մէկ քանին մտնել, վասն զի ընդունելութիւնները հոն կը կատարուին: Միւսները որոնք «Մասնաւոր յարկ» կը կոչուին, որոշեալ ասան մը և որոշեալ ժամերու մէջ կը բացուին այցելուններուն: Երրորդ տեսակին պատկանող յարկերը թագուհիէն, իր ամենէն մօտ ազգականներէն, խիստ մը տարիմ բարեկամներէն և արքայական գերդաստանին երկու կամ երեք ամենահին սպասաւորներէն զատ ոչ ոք կրնայ մտնել: Այդ յարկը չորս մասի բաժնուած է. ունկնդրութեան սրահը, արդուզարդի երկու սենեակները և ննջարանը: Կը գտնուի զղեակին երրորդ յարկը, հարաւ—արեւելեան մասին մէջ որ Ալբերթիա Աշտարակ կը կոչուի: Դուռսէն հոն կը մտնուի մասնաւոր դուռնէ մը, որուն քով միշտ սպասաւոր մը կը կենայ և երբ արքայական կառքին թաւալումը իմանայ, անմիջապէս կը փութայ դուռը բանալու: Թագուհին ներս մտնելէ ետքը վերելակի մը մէջ կը նստի եւ քանի մը վայրկեանէն կը փոխադրուի ունկնդրութեան սրահը: Ն. Ալեհափառութիւնը հոն կ'ընդունի իր շուրջը գտնուողները, եթէ անոնց հետ մտերմական տեսակցութիւն մը ունենալ ուզէ: Այդ տեղ արուած ունկնդրութիւնները պաշտօնական ձեւակերպութեաններէ զերծ են: Ամէն կերպով կը տարբերին Սպիտակ, Կանանչ և Կարմիր սրահներուն մէջ արուած ունկնդրութիւններէն: Թագուհին այդ սրահներուն մէջ շատ քիչ կ'երեւայ: Դռնագին յօգացաւին պատճառաւ Ալբերթիա թագուհին բաւական ատենէ ի վեր շրջուն թիկնաթոռով կ'երթայ մէկ սրահէն միւսը: Եթէ քալէ ալ, գաւազանին կրթնած և հնդիկ սպասաւորի մը թեւը մօտ է: Մասնաւոր ունկնդրութիւններու պահանջ թագուհին սե շրջագրեալ կը կրէ չուխայէ կամ մետաքսէ և գլուխը կը դնէ այրիներու յատուկ բաբոթ գլխարկ մը: Իր արծաթագոյն մագերէ բռնքերուն վրայ հիւսկեր կը կազմեն: Մատերուն վրայ կան շատ մը մատանիներ որոնք իր կեանքին զանազան նշանաւոր պարագաները կը յիշեցնեն: Միշտ ապարանջան մը ունի թեւը, մէտայեռնով մը

որուն մէջ կայ իր թողնորհներուն ամենէն փոքրին կենդանագիրը: Թագուհին ով որ ներկայանայ, պէտք է ձեռնոց դրած ըլլայ:

Մինչև վերջին ամիսները թագուհին աչքերուն կարողութիւնը տղէկ էր, բայց ժամանակէ մը ի վեր տկարացած է: Ն. Ալեհափառութիւնը միշտ ոսկի ակնոց կը կրէ: Խօսակցութիւնը եռանդուն է և զուարթ: Առաջին բառէն սկսելով իր ունկնդիրները հաճոյքով մտիկ կ'ընեն զինքը: Թագուհին արդուզարդի սենեակներէն մէկին մէջ կայ գրասեղանը որ գեղեցիկ տեսարան ունեցող պատուհանի մը առջև դրուած է: Գրասեղանին վրայ կայ ոսկիէ զանգակ մը, սպասաւորները կանչելու համար: Մինչև հիմա Ալբերթիա թագուհին կանոնաւոր թղթակցութիւն մը ունի: Օրը քանի մը ժամ գրելով կ'անցունէ: Սեղանին դիմացը կախուած է իր ամուսնոյն՝ Ալպերթ իշխանին կենդանագիրը: Արդուզարդի սենեակներուն կահաւորումը միեւնոյն է ինչ որ էր իր ամուսնոյն ողջ եղած տանը: Երբ կերպասներուն դոյնը նետէ, անմիջապէս կը փոխուին միեւնոյն տեսակէն ու գոյնէն: Թագուհին ունի նշանաւոր մարդերու և կիներու կենդանագիրներու հաւաքածոյ մը: Ննջարանը կահաւորուած է մութ կարմիր կերպասով: Մահճակալը փայտէ է: Թագուհին երբ ճամբորդէ, իր անկողինն կազմածը միասին կը տանի: Մահճակալին վրայ կախուած է իր ամուսնոյն կենդանագիրը: Թագուհին արդուզարդի առարկաները ոսկիով զարդարուած են: Չեզք լուալու ամանը ձոյլ ոսկի է, իր թագադրութեան հանդէսին տութիւ շինուած: Թագուհին ամէն կիրակի իր բոլոր սպասաւորներով զգեսակին մատան մէջ ներկայ կը գտնուի պատարագի: Արարողութիւնը ինք կը կարդայրէ և քարոզին նիւթը շաբաթ իրիկունէ անոր կը մատուցուի: Հարցնողներ կան թէ Ալբերթիա թագուհին կարծիքը ի՞նչ է ծիսականութեան խնդրին մէջ: Աւելորդ է բռնել թէ Ն. Ալեհափառութիւնը պարզ արարողութեանց կուսակից է, որովհետեւ կարճ քարոզներէն եւ պարզ աղօթքներէն կ'ախորժի: Շատ կը նեղանայ երբ եկեղեցիի բեմէն վարդապետական կամ բաղաճական խնդիրներու համար վիճաբանութիւն կատարուի:

Թագուհին երբեմն առտուները շատ կանուխ կ'արթննար, բայց երկու երեք տարիէ ի վեր առտուան նախաճաշը իր ննջարանին

մէջ կ'ընէ։ Կէս օրէն երկու ժամ առաջ կը ճաշէ իր գերգաստանին անդամներուն հետ։ Ամառ երբ օդը գեղեցիկ ըլլայ, ճաշը պարտէզին մէջ կը արուի։ Սեղանէն հտքը թագուհին գործի վրայ կը տեսակցի իր քարտուղարներուն հետ։ Կը ստորագրէ պաշտօնական թուղթերը և պատուակալ օրհորդի մը կարգալ կուտայ օրուան լուրերը։ Յետոյ Ֆրանկոսի պարտէզին մէջ պոյոյ կը կատարէ կառքով մը զոր էշ մը կը քաշէ։ Երբեմն մինչեւ ժամակայ ագարակ մը կ'երթայ։ Շատ անգամ ալ ճամբան կը կենայ որսի շուներու տեղերը այցելելու համար եւ կամ կը հանդիպի այն աշխատանոցը ուր արքայական գերգաստանին յատուկ կարագը կը պատրաստուի։ Կէսօրէն երկու ժամ ետքը ղզեակը դառնալով նորէն կը ճաշէ, ուրկէ ետքը բաց կառքով պոյոյի կ'ելլէ, առջեւէն ձիավարով մը։ Պոյոյան վերագործին թէյ կը խմէ եւ յետոյ կը քաշուի իր յարկը, ուր նստակ կը դրէ եւ ասեղնագործութիւն կ'ընէ մինչեւ իր երկուան ճաշին ատենը։ Նոյն միջոցին կ'երթայ մեծ ճաշասրահը։ Այդ պահուն է որ ղզեակին հրաւիրեալ հիւրերը կը ներկայացուին Ն. Ահափառութեան։ Ճաշէն հտքը թագուհին կը տեսակցի իրեն ներկայացող անձներուն հետ։ Քիչ մը վերջը շրջուն թիկնաթուղի իր յարկը կը վերագործայ, բայց հոն անմիջապէս չի հանգստանար, մինչեւ կէս գիշեր նստակ կը գրէ եւ կը պատրաստէ իր օրագիրը որ օր մը պիտի ապագրուի, անձնական յիշատակներ Վիգթորիա թագուհին անունով։



Հրէական Խորանանկութիւն

Ռուսաստանի մէջ առ հասարակ շատ խիստ կերպով կը հսկեն անցագիրներու վրայ, մանաւանդ հրեաներու մասին։ Անցեալները երեք հրեաներ, որոնց երկուքը անցագիր չունէին, քաղաքի մը

փողոցներէ մէկէն կանցնէին, երբ յանկարծ քիչ մը հեռուէն տեսան ոստիկան մը որ դէպի իրենց կուգար. անկասկած էին թէ նա անցագիր պիտի հարցնէր։

— Դուք անխուով և հանգիստ ճամբանիդ շարունակեցէք —, կըսէ իրենց անցագիր ունեցող ընկերը և ինքը կը սկսի ուժին ներածին չափ փախչիլ, մերթ ընդ մերթ ետին դարձած, ոստիկանին նայելով։ Ասոր վրայ ոստիկանը աւելի կը կասկածի և կը սկսի զայն հալածել, «կեցի՛ր, կեցի՛ր», պոռալով, ու բաւական երկար վազելէ ետքը կը յաջողի հրեան բռնել։

— Ըսէ՛ նայիմ, ո՞վ ես դու, կը հարցնէ շնչասպառ։

— Ես այսինչ այնինչն եմ։

— Աղէկ. անցագիրդ ո՞ւր է։

— Հրամայեցէք։

Ոստիկանը կը կարդայ անցագիրը ու գլխէն մինչև ոտքը հրեան աչքէ անցունելով, կասկածելի բան մը չի գտնելուն վրայ շուարած կը մնայ։

— Լաւ, կըսէ, քանի որ անցագիրդ կանոնաւոր էր և դու ալ կասկածելի մարդ մը չէիր, ինչո՞ւ անանկ շնչասպառ կը փախչէիր։

— Ես չէի փախչէր, պարոն, այլ վազելով կը բժշկուէի։

— Ի՞նչպէս։

— Ես փորի հիւանդութիւն մը ունիմ. բժիշկը խորհուրդ տուած էր առաւունքները այսպէս վազելու։

— Լաւ. բայց երբ զիս կը տեսնէիր որ քեզի հետեւելով կը վազեմ, ինչո՞ւ չի կեցար։

— Որովհետեւ կարծեցի թէ դուք ալ միեւնոյն հիւանդութիւնն ունիք և բժիշկը ձեզի ալ խորհուրդ տուած էր վազելու։

Ոստիկանը կը պարտաւորի ձգել օձիքը խորամանկ հրէին։ Աւելորդ է ըսել թէ անցագիր չունեցողներն ալ արդէն կծիկը դրած էին։

Քեզ ինչո՞ւ հոս բերեր են, հարցուցին անգամ մը Սիպերիոյ մէջ հրեայ կալանաւորի մը:

— Առեւտրական մրցումի համար.

— Ինչպէ՞ս . . .

— Մրցումի համար.

— Բայց կը սխալիս, հրեայ, մըրցումի համար հոս մարդ չեն բերեր. կ'երևի թէ ուրիշ յանցանք մը ունիս. զոր չես ուզեր խոստովանիլ.

— Ո՛չ, հաւատացէ՛ք որ մրցումի համար էր.

— Բայց, որո՞ւ հետ կը մրցէ՛իք.

— Կառավարութեան հետ.

— Ի՞նչպէ՞ս:

— Շատ հասկնալի կերպով, նա կը շինէր թղթագրամը ու կը ծախէր հաւոր 100 ռուպլիի, մինչդեռ ես նոյն թղթագրամը շինելով կը ծախէի հաւոր 20 ռուպլիի. ահա այդ մրցման համար ինձ բերին այստեղ:

Գաղղիոյ Սէնի եղեռնադատ ատենանք, ութուն տարեկան վաղեմի թիապարտ մը, նոր գործած ոճրին առթիւ, քսան տարի տաժանակիր աշխատութեան դատապարտեց:

Դատապարտեալը դատավճիռը լսելուն գոչեց:

— Ոհ, շնորհակալ եմ Տէր, նախագահ, դատարանիդ. այս շնորհը երբէք չպիտի մոռնամ, շիտակը չէի յուսար որ քսան տարի հոս պիտի ապրիմ:

ԱՐՄՏՈՒԻ ԿԱՊԵԼԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

ՆԻՍՏ Ա.

Անցեալ շաբթու ծանուցած էինք թէ սեպտ. 1 ին գիշերը Տխրահոյսակին նախագահութեամբ սինդիկատային խորհրդի Աբստուին Կապելային մէջ 'ի Ժողով դումարուած էր: Ահաւասիկ այդ Ժողովին մանրամասնութիւնը:

Նոյն գիշերը՝ ապսպրուած օլիին շիշէները ու մեզէները թիւ 12 սեղանին վրայ դրուելէն ետքը, նախագահը ատենանք կը բանայ հետեւեալ բանախօսութեամբ.

Ազնիւ Հայրենակիցներ,

Տեղւոյս ազգային մանկուոյն ճակատագրին հետ . . . խաղալու համար իմ հրաւերի անսարկոյ այս գիշեր Աբստուին մեծ մեծաւուն Կապելայի 12րդ մասին շուրջը հաւաքուելիք՝ ինձ մեծ բերկրութիւն առթեց. հոս երազ անմահ իմ նախնի փառաց ձեզ պիտի վառէ ի սէր հայրենեաց. այս, տեարք, հոս պիտի կրնաք թեր ու դէմ խօսիլ ներշնչմամբ ամենակարող օլիի և որոշման մը յանդիլ. հետեւեալ ատենանք բացուած է, ինչպէս նաև շիշէներուն բերանները. ու ահա ես գաւաթները սիմսան լեցնելով կը հրաւիրեմ զձեզ կոնծել ու ցանկալին վճիռը արձակել:

Մէն չավուշ. — Կարտաշ, նէ կիւզէլ սոյլէյօր. աչգիմին սուլարի միտեաճի կայըշը քիվի ախըյօր:

Վէվ չավուշ. — Կեօյընը սէվտըղըմ՝ մաշու Շէյթան. մըլիա պու գօլի քիմ քի պիւքէրգա՝ տիւ Պուրկաղից տիւս կեհաս, որ չի կարենան պիւքմիւշ անել իսա՛ էսա տեղ տի մնաս:

Սըվաճէֆ — Հայըրըլըսը, կենդանութիւն:

— Անուշ, անուշ.

Նախ — Թէև ես չեմ ուզեր շարունակել այս փափուկ պաշտօնը, որուն նարժան եմ, (աղէկ գիտցար) բայց տենելով որ իմ տեղս բռնող մը չպիտի գտնուի, (Պուրկարիայէն դուրս ալ չի գտնուիր) կը փափաքիմ ներկայ տարեշրջանին ալ ծառայել սիրել ազգիս:

Մէն չավուշ. — Տօղրի տիր, Վէվ չավուշ, ըղորդ կասէ. ծօ քիմին ազգին առիշմիւշ սէնի պուրտան չըխարթմագ:

զանքմ շու շիւշէնուն արախը քիւրի ախ-
սուն քի՛ քեզ էսա տեղից տիւն չեն կա-
նար հանել. օյլէ տէկիլ մի՛, զարտաշլըգ
Սըվաճի:

Սըվաճի. — Պէն չուգ տտարընը պիլի-
րիմ քի՛ պու իշին պիթիւրիմի՛ պանա
վատ օլմուշ ճաֆէթին ուճունտա տըր՛,
ճաքէթի կիյտիլիմ կիւն առնեմ՝ չտամ
վարժապետիմիլ օլմուշ տըր:

Վէվ չափուշ. — Օյլէ իսէ մօմշէ՛, չու-
շէլէրի թօլթուր:

Նախ. — Տխար Սըվաճիէֆ, ես իմ
խոտտումս պիտի կատարեմ, ահա ծնողք-
ներու ինքնակոշ ներկայացուցչին, շիշ
քէպապի կօսքութիւն Շէրպէթճօֆի ներ-
կայութեանը կը կրկնեմ թէ՛ խօլթուիւ-
ճիին ապսպրած եմ, անպատճառ էլտէն
տիւշմէ՛ ճաքէթ մը պիտի բերէ քեզի:

Կոշկապարը. — Թող բերէ՛, չուշկա ալ
թող բերէ՛, տօմաթէզ սալաթասի ալ,
Առնեմ Չտամ մեր վարժապետն է՛:

Նախ. — Շնորհակալ եմ տեարք, որ
գնահատելով ազգիս անձնուէր մշակը
կամ ու չախը, ձեր զաւկները անոր խը-
նամքներուն պիտի յանձնէք. Ամենակա-
րող ճիպրէի զօրութեամբ կաւետեմ ձեզ
թէ, զալ տարի կանոնաւոր զօրաբանակ
մը պիտի ունենանք մեր հրամանատա-
րութեամբը հայրենիք երթալով զործե-
լու:

Մէն չափուշ. — Օյլէ իսէ հօլան,
եաշատուն մուշու Շէյթան:

Պէրպէր. — Պէն տէ՛ կիտէր անագ,
ճապատան սիզիի բէրտահլը պիւրէր թԷ-
րաշ էտէճէիմ, վարսըն չօրպատա պի-
լիմ տէ պիւր թէլ մայտանօսումը պու-
լունտուն:

Վէվ չափուշ. — Էվէթ, սիզին մար-
տիրոտունըդ տա պարանպար պուլուն-
մալը տըր:

Քիւէճի. — Պունտան էյի վարժա-
պետ պիլիմ իշիմիլէ կէլմէզ:

Մէն չափուշ. — Կէլմէզ, կէլմէզ, չու-
շէլէր տէ պօշ տուրմաղա կէլմէզ:

Նախ. — Ուրեմն տեարք, թող շի-
շէները լեցունեն և քօզաներու ձայնով
լաւի ձեր վճիռը:

Մէն չափուշ. — Պէ կարտաշլուգ,
ուզուն լաֆըն կըստասու, մուշու շէյթան
մեր վարժապետն է, զապուլումուզ մու,
Ամենքը. — Հապուլումուզ քի զա-
պուլումուզ. օլտու պիթտի:

Նախ. — Շնորհակալ եմ տեարք,
հիմա քիշ մալ խորհինք մեր կազմա-
կերպութեանը վրայ. պէտք է զիտնաք
ու վստահ ըլլաք թէ իմ պատրաստած
բլանիս կիրառութեամբը վարժարանը
հսկայաքայլ պիտի յառաջանան (դէպի
խսրխօրատ):

Մէն չափուշ. — Վէսսէլամ, տօ՛ մօմշէ,
օյլէ իսէ արի կանչէ՛ տալու զուռնան:

Սըվաճէֆ. — Էյի ամա՛ քիմ օլաճագ
շիշէլէրի տօլտուրան:

Վէվ չափուշ. — Նէմիլէ՛ լազըմ, բա-
րալարըն թօբիսինի վէրէճէք տիւր առ-
նեմ չի տամ:

Նախ. — Այո՛ բարեկամներս ուղած-
նուդ չափ կոնծեցէք ու ճնկեցէք. ես
թրքական առածը յիշելով, թէ «Գազ
կէլէն եէրտէն թափուգ էսիւկէնմէզ»,
զինեպանին պարտկան պիտի մնամ:

Քիւէճի. — Պունտան էյի վարժապետ
կէօրմէմիշ տիւր Պուկարիսթան:

Վէվ չափուշ. — Կեօզընը սէվտըլըմ
մուշու շէյթան, մէկ պաշիկ իսթէրըմ
աննինտան:

Մէն չափուշ. — Պէն տա իսթէրիմ
սալ եանաղինտան:

Վէվ չափուշ. — Կարարըմը կարար
տուր. վարժապետիլ Առնեմ Չտամ
տուր:

Մէն չափուշ. — Մօմշէ՛, արի՛ շիւշէ-
լէրի թօլթուր:

Քիւէճի. — 40ընճը շիշէ տալեա՛ տըր:

Ամենքը. — Դէյֆիմիլ տէ՛ պու ագ-
շամլըգ թամամ տըր:

(Շարունակելի)

ԱԶԴ

Յառաջիկայ Սեպտ. 19ին նոր թաղ. խորհրդի մը ընտրութեան պիտի ձեռնարկուի Սահմանադրութեան օրէնքի համաձայն, ուստի այս առթիւ թախանձագին կը խնդրեմ արգոյ հասարակութենէն որ բարեհաճին ազգասիրաբար Ս. Պատարագի աւարտումէն քիչ ետքը նոյն օրը ազգ. վարժարան գալ:

Ամեն անոնք որ ընտրելու իրաւունք ունին, կը սիրեմ յուսալ որ ներկայս իւր հըրաւիրագիր համարելով կը փութան հանդէպ ազգին ունեցած պարտքերնին նոյն օրը խղճի մտօք կատարելու:

9 Սեպ. 99 Ծնամ աղօթարար
Վառնա Տ. ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Մ. Զ.

ԹՈՒԹՈՎՄՈՒՆԷ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վարնա:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տիար Յ. Կ. Պօնճուգեանի պատկերազարդ Գերական — Ընթերցարանը: Դին 60 սանդիմ. վարժարանաց համար 100ին 15 ղեղջ:

Դիմել սա հասցեով

J. G. BONDJOUKIAN VARNA

Ն Ի Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

Մեղի և Ապաշար

Պոլսական կեանքէ բաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Դին 60 սանդիմ: Դիմել իմազրութեան:

ՄԵՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔԱՂԱԲԻ



ՊՈԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ
Երաշխատեալ

Ա. ՊԱՐԴԵՆԻՆ Է 500.000 ՅԲ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	թիւեր.
" Յունիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-31	16,000	"

Պէնսիոն և Գողտրիկ	Կէն	Գաւորդ	Մէկ տիւր
Ա. Ամիս	5 Ժ.	2, 50 Ժ.	1, 25 Ժ.
Բ. " "	8	4	2
Գ. " "	10	5	2, 50
Դ. " "	14	7	3, 50
Ե. " "	12	6	3
Չ. " "	8, 60	4, 30	2, 15
	57, 60	28, 80	14, 40
Ա. Ամիս	10 Ժ.		
" " "	16		
" " "	20		
" " "	28		
" " "	24		
" " "	17, 20		
	115, 20		

Պէնսիոն և Գողտրիկ տեղեկութեանց համար պէտք է գրել Ստեփանոս Տիար ՍԱՐԳԻՍ ՊԱՐԴԵՆԻՆԷՆ, միակ գրեալ գործակալ սոյն վիճակահանութեան, Վառնա, Մոսկովա:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:
Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէնն ալ վճարել:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печантица Взаимность — "Варна."